**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/12» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան                                                                                                    10.07. 2019թ.
ժամը $10^{30}$

**Գնահատողներ՝**
Մասնակցում էին՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ պետ, գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ),
**անդամներ՝**
ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀՎ ՏԱ բաժնի պետի ավագ սպա Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ 31233 զորամասի տեխնիկ-մեխանիկ, ենթասպա Ծ. Մելքումյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ ՀՕՊ, ՌԷՊ կապի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զադոյան
**Գնումների համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Գ. Հակոբյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

---

(Գ. Հակոբյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:***

**1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Գ. Հակոբյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին 1-ին չափաբաժնում՝ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի, 2-րդ չափաբաժնում՝ «Տոպազ-95» ՍՊԸ-ի, 3-րդ չափաբաժնում՝ «Էլ-Սա» ՍՊԸ-ի, 4-րդ չափաբաժնում՝ «Միկրորինգ» ՍՊԸ-ի, 5-7-րդ չափաբաժիններում՝ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի փաստաթղթերի: Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/12» ծածկագրով ընթացակարգին «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված որակավորման փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝
- Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 6.1 –ում 5-րդ չափաբաժնում թերի է հրավերով պահանջվող՝ Ultra-low light Powered By DarkFighter Color: 0.005lux/F1.6, B/W:0.001lux/F1.6,- նշված չէ, իսկ 6-րդ չափաբաժնում նշված մոդելի անվանումը թերի է:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:
Մինչև սահմանված ժամկետի ավարտը «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն շտկել է վերոնշված անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 8-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ -ն, «Տոպազ-95» ՍՊԸ-ն, «Էլ-Սա» ՍՊԸ-ն, «Միկրորինգ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ «Էներջի Գրուպ» ՍՊԸ -ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը **չգերազանցող** ժամկետանց պարտավորություն:

1.2 Հիմք ընդունելով գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 1-ին չափաբաժնում՝ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի, 2-րդ չափաբաժնում՝ «Տոպազ-95» ՍՊԸ-ի, 3-րդ չափաբաժնում՝ «Էլ-Սա» ՍՊԸ-ի, 4-րդ չափաբաժնում՝ «Միկրորինգ» ՍՊԸ–ի, 5-7-րդ չափաբաժիններում՝ «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/12»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:**

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Գ. Հակոբյան)

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/12»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:**

**Գնահատող (ԳԱՊ)** Հ. Կարապետյան

**Գնահատող,** Խ. Երիցյան

**Գնահատող,** Ծ. Մելքումյան

**Գնահատող,** Ռ. Չադոյան

**Գնումների համակարգող՝** Գ. Հակոբյան